Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/21 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի «Ստեփանավանի պրոֆ. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

01.10.2019թ.
ժամը 9:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Աշ. Գրիգորյան
Ռ. Ադամյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 11.09.2019թ.

ա) հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել էր Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 27.09.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Հրավերով պահանջվող Հավելվածներ N 5 և N 5.2-ի փոխարեն Մասնակցի կողմից ներկայացվել են Հավելվածներ N 3 և N 3-2-ը: Անհրաժեշտ է ներկայացնել Հավելվածներ N 5 և N 5.2-ը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված:

- Հրավերով պահանջվող <<էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգերի ներդիր ունեցող Ճարտարագետ-էներգետիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող>> և <<բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցերի ներդիր ունեցող ճարտարագետ-էլեկտրիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող>> առանձին պանահջվող մասնագետների փոխարեն ներկայացվել է վերոգրյալ ներդիրներն ունեցող մեկ անձ՝ ճարտարագետ-էլեկտրիկի որակավորմամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ:

- Հրավերով պահանջվող Հավելված 5.2-ի փոխարեն ներկայացված Հավելված 3.2-ի աղյուսակում <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյան մեջ լրացված չէ Արմեն Մակունցի, Արուս Զալյանի և Դավիթ Մարտիրոսյանի վերաբերյալ տեղեկատվությունը:

- Արթուր Մկրտչյանի անձը հաստատող և մասնագիտական որակավորումը հիմնավորող փաստաթղթերը (դիպլոմը) ընթեռնելի չեն:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 27.09.2019թ. ծանուցվել է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Աշ. Գրիգորյան

---------- Ռ. Ադամյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան